



15

ՅԱՂԱԳՍ «ԵՐԵՄՆԵՐՈՐԴ»-Ի

«Բազմալեզու»-ի նախորդ թիվերին մէկուն մէջ (1959, թ. 3-5, էջ 109) քննադատած ու խորթ գտած էինք երեսներորդ ձեւը, եւ հակիրճ փաստերով ջատագոված էինք հնաւանդ երեսներորդը:

«Յառաջ» օրաթերթի առաջին էջի սիւնակներուն վրայ կարալ ոմն, վրդոված ու դայթակղած, քիչ մըն ալ այլաբանելով մեր ըսածները (յաճախ նաեւ նիւթէն դուրս անտեղի շեղումներով, որոնց հարկ չենք տեսներ պատասխանել), դարձեալ հարցը կը դրդէ (1959, Սեպտ. 11, 12):

«Բազմալեզու»-ի ներկայ թիւին մէջ մեր ընթերցողները անշուշտ նկատեցին կարալի կողմէ քննադատութեան ենթարկուած Հ. Եփրեմ Տէր Ղազարեանի պատասխանը եւ տուած բացատրութիւնը (էջ 201-204):

Քանի մը խօսք ալ մեր կողմէ:

Նախ, չնորհակալութիւն կը յայտնենք կարալի, մեղի հանդէպ չուայլած գնահատական տողերուն, որոնք մեր կարողութենէն եւ աշխատանքէն գերազանց են. Ղազարեանի աթոռը կը մնայ շատ բարձր. չիւնք անոր հարազատ տիրոջները եւ դիւրաւ ասոր անոր չբաշխենք:

Նմանապէս կ'ուզենք յարգոյ յօդուածադրին ուղղութեան յանձնել որ չհամարձակի անդրաշխարհային իշխանութիւններ տալ մեզի. ոչ զոք դժուար զրկած ենք, ոչ ալ քաւարան. պարզապէս ըսած ենք՝ լեզուական անեքեքութիւն, Մեսրոպեան բարբառին հանդէպ գործուած ծանր յանցանք. մնացածը ճանդէական երեւակայութիւն է:

Այս առիթով՝ կրկին անգամ բացատրենք մեր այս սիւնակներուն բնոյթը. լեզուադիտական պրոփոփմներ կատարել է՛ր մեր բուն նպատակը, այլ՝ մատնանք

չէլ մամուլի թերացումները, ուղղել վրիպակները, ակնարկել փաստերուն՝ որոնք յաճախ ծանօթ են այլուստ, քիչ մըն ալ ժպիտ ցանել քերականական չոր ու ցամաք վէճերուն մէջ: Երեք տարուան փորձէն վերջ՝ հարկ կը տեսնենք նիւթերն աւելի ընդլայնելու. Ի ՍԵՐ «Մեծասան»-ին:

* * *

Դառնանք երեսներորդին: Սկսինք Մալխասեանի քառահատոր բառարանէն. անշուշտ մեծ հեղինակութիւն. ուստի առնենք եւ քննենք դասական ածականներու բոլոր ընտանիքը՝ երեսունէն վեր: Մալխասեան կը դնէ.

1. — Երեսնական, երեսնամեակ, երեսնամեայ, երեսնամեան, երեսնամեմի, երեսնապատիկ, երեսնաւոր, երեսնակ, երեսներեակ, երեսնօրեակ, երեսնօրեայ... ԵՐԵՄՆԵՐՈՐԴ:

Կը դնէ նաեւ երեսներորդ, ըսելով՝ տե՛ս ԵՐԵՄՆԵՐՈՐԴ:

Կայ նաեւ երեսուննոց. որ կը պահէ իր ուն: Ուրեմն, պիտի ըսես, կրնայ ըսուիլ երեսներորդ: Շուտ մի՛ եղբակացներ. սպասէ տակաւին:

2. — Քառասնական, քառասնամեակ, քառասներեակ, քառասնորդ (մեծ պահք), ... ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ: Այս անգամ չկայ քառասներորդ:

Կայ դարձեալ քառասուննոց, ու՝ ու:

3. — Յիսներորդի շարքին (աւելորդ է ընտանիքը շարել) կը դնէ դարձեալ յիսներորդ, ու՝ ու:

4. — Վաքսունի շարքին՝ չկայ վաքսներորդ, այլ՝ վաքսներորդ, առանց ուի, բայց օրինակներու շարքին՝ ունի ու՝ ու:

Կայ վաքսուննոց, ու՝ ու:

5. — Եօթանասունի շարքին չկայ եօթանասներորդ ու՝ ու. կը դրժածուի եօթանասուննոց:

6. — Ուքսունի շարքին՝ բարդութիւններ կը դնէ ու՝ ու, այսպէս. ուքսունական, ուքսունական, ուքսունական,

ուքսուննոց, ուքսունականիկ, ուքսունաւոր, ուքսներորդ...:

7. — Իննսունի շարքին՝ նմանապէս ու՝ ու բարդութիւններ կը նախընտրէ. իննսունական, իննսունամեայ, իննսուննոց, իննսներորդ, ... Բայց ունի նաեւ առանց ուի ձեւերը, ինչպէս իննսնական, իննսնամեայ, իննսներորդ...:

Իսկոյն նկատել տանք որ արեւելահայերէն, աւելի հաւատարիմ գրաբարի, կարելիին չափ կը զեղչեն ու երկբարբառը, նախընտրելով իննսներորդ, իննսնական ձեւերը:

Հայկազեանը, գրաբարի բառարան, չի ճանչնար այս երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, վաքսներորդ...: Միանգամ միայն կու տայ սրններորդ...: Միանգամ միայն կու տայ ուքսունական բարդութիւնը, ու՝ ու. բայց օրինակ չի թուեր, այլ լոկ ուքսունական բառին կից:

Ուրեմն խնդիրը ճշգրիտ հարց է, ինչպէս կ'ուզէ եղբակացներ մեր աշխատակիցը: Եթէ ճշգրիտ վրայ մնայ, կարծեմ առջին մարդ տարբեր ձեւ դրժածելու իրաւունք պիտի ունենայ: Կը ճանչնամ խմբադիրներ, որոնց ճշգրիտ քանի մը անգամ կը փոխուի միեւնոյն սիւնակին վրայ: Հարկ է աւելի խորանալ:

Միւս կողմէ, չի բաւեր խնդիրը լուծած նկատել երեսուննոց, յիսուննոց (ու՝ ու) նկատել երեսներորդ. երեսներորդ կ'ըստուերու գոյութեամբ. երեսներորդ կ'ըստուերու կ'ըստուերու ըսուիլ ու գրուիլ նաեւ երեսներորդ:

Երեսներորդ բառին մէջ ներդաշնակուած բուն պահանջ մը կայ, որ կը սերէ թեան բուն պահանջը. տեղ է իսկապէս ուի ներկայութիւնը. տեղ է իսկապէս իննսներ(ը)նոց բառը: Եթէ երեքանք իննսներին, ներդաշնակութեան այդ պահանջը կը դառնայ պարտադրանք. կրնա՞յ ըսուիլ իննսներ. առ ի՞նչ ճիւղալին ձեւ մէջ՝ իննսներ. առ ի՞նչ ճիւղալին ձեւ մէջ՝ իննսներ իննսներնոց (!?):

Ու ներդաշնակութեան այս պահանջը, որ է խոստովանել այդ ը-երու հնչումէն, կը ստեղծէ միօրինակութիւն մը բոլոր շար-

քին մէջ. երեսներնոց, քառասներնոց, յիսներնոց, վաքսներնոց, ուքսներնոց...:

Նման պահանջ մը կը մղէ մեզ գրել խոստումնալից, դիտումնաւոր ու՝ ու:

Բայց այսպիսի ներդաշնակութեան պահանջ մը չկայ երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, եօթանսներորդ բառերուն մէջ, որոնք ըստ բարդութեան եւ ածանցումի օրէնքին՝ կը կորսնցնեն իրենց վերջավանդի փակ ու-երը: Ինչո՞ւ համար կ'ուզուի այդ ներդաշնակ եւ սահուն ձեւերը երկնցնել, տափակցնել, պահելով ու-երը: Յիսնապետ ըսողը ինչո՞ւ պիտի չգործածէ յիսներորդ ուղիղ ձեւը, եւ պիտի երթայ նախընտրէ յիսներորդ, վաղն ալ անշուշտ յիսնապետ:

Թողունք որ այդ երեսներնոց, յիսներնոց բառերը նորահար ռամիկ բառեր են, որոնց գոյութիւնը (վերեւ բացատրուած թէ ի՞նչ օրէնքով) իրաւունք չի տար մեզի տակնուվրայ ընելու բարդութեան եւ ածանցումի ընդհանրական օրէնքը, եւ վերապարանափոխելու անմեղ էակներ:

Ուստի հնչեցէք ու գրեցէք երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, եօթանսներորդ: Ի՞նչ հարկ կայ այս վերջին հնչափանի բառը երկնցնել վեց վանկի:

Անդին կը մնան վաքսներորդ, ուքսներորդ, իննսներորդ բառերը, որոնց մէջ իրակ ը հնչիւնը այնքան ալ տեղ չէ. ու դնելով՝ աւելի չի՞ տափակար: Արեւելեան մտահայ գրադէտները չեն որ պորական կեցունել, մեղցունել, անցունել բառերուն մէջն ու-երը թօթափած ու դրած են ը-եր, միայն հնչելու պահուն. կեցունել, մեղցունել, անցունել... այս վերջինը հարկ է գրել միշտ ը-ով. այդ մասին ուրիշ անգամ:

Ճշգրիտ պահանջներ է որ ու-երը ը-ի վերածենք. հիմակ ալ ճշգրիտ կը պահանջէ որ ը-երը ու-ի՞ վերածենք: Ասիկա հասկանալի է:

Եւ այսպիսի հակասութիւններ պիտի տեսնուին միշտ՝ եթէ հայ լեզուի քերականական, բարդութեան, ածանցումի հիմնական օրէնքները անտեսուին:

Ուստի առանց դայթակղելու, եւ առանց

զրաբարեան հինգած ձեւեր նկատելու՝ անվան զործածեցէք նաեւ վաթսմերորդ - վաթսմամեակ, ութսմերորդ - ութսմամեակ, իննսմերորդ - իննսմամեակ: Արդէն ժողովուրդը կը հնչէ իննիսուն, բայց վըրենք իննսուն:

* * *

Երեսուներորդի ի պաշտպանութիւն, բացի երեսունոց-էն, ուրիշ բառ մըն ալ կը բերուի. հինգ-ը, որ զրաբարի մէջ անգամ, ածանցումի պարագային՝ չի կորսնցնէր իր ներքին ի տառը. կ'ըլլայ հինգերորդ, ոչ թէ հնգերորդ. ուրեմն ... էն...:

Շատ բարի. բայց ի՞նչ հրաշալի գիւտ. Բազմալեզուի եւ Այստեղեանի համաձայն՝ այդ հինգ բառը, հարիւրաւոր բառերու մէջէն քանի մը բացառութիւններէն է. հինգ - հինգերորդ - հինգետասան - հինգ-եմեան. հիմն - հիմնական, հիմնել: Բացառութիւններու վրայ կը թնկիւր կը նմանի ցեխի վրայ հանգչեցուցած զաւաղանին:

* * *

Այս առիթով կու գամ նկատել որ Նայիրի-ի խմբագիրը, կարծէք ի հեճուկս մեր ըսածներուն, իր 20 Սեպտ. թիւին առաջին էջին վրայ կը գրէ. « ԶՈՒԱՐԹ-ՆՈՅ ամսաթերթը ... կը քեւակոյտ իր երեսուներորդ տարին » (ու-ով), ու քանի մը տող վար կ'աւելցնէ. « ... Բայց եռեսնամեակ մը հայ հանդէսի մը համար » էն...: Երեսուներորդ-ը ու-ով. ո՞վ զարմանք. թէ ու-ն կը պահէ, ինչո՞ւ քանի մը տող վերջ՝ կը գրէ մտքերուն, ի սրտէ. ինչո՞ւ չի գրէր միտքերուն, ի սիրտէ էն...:

Կայ աւելի զարմանալին. նոյն գրիչը, Նայիրի-ի նոյն սիւնակին վրայ, կը գրէ նաեւ սիրտին, քանի մը տող վար՝ սրտին:

Բայց սա եռեսնամեակ-ին նայէ. ի՞նչ իրաւունքով հոն բազմեր է ու տառը: Ուշադիր, սիրելի խմբագիր. (նոյն թիւին մէջ, 4րդ էջին վրայ պոռալ-ը օ-ով փախեր է. ասոնք լոկ տապալական վրիպակներ չեն, այլ ուղղագրական սփիւններ):

* * *

Հուսկ յիշելու ենք քանի մը անուններ ալ.

Երեսուներորդ (եւ ոչ թէ երեսուներորդ) կ'աւանդէ Յովհաննէս Գաղանձեան (Գերականութիւն միջին, 1947, էջ 36, տպ. Կ. Պոլիս, Եօթներորդ տապալակութիւն) : Ի դէպ, ըսենք որ մեր քերականները յաճախ « էն... » ըսելով կը գոհանան. ախպէս, օրինակ, իններորդ, տասներորդ, քսաներորդ էն...: Որով զգուշանալէ հարցը լուծել՝ քերականութիւններու գիտելով: Ախպէս Յ. Գաղանձեան երեսուներորդ-էն անդին չ'անցնիր:

Հ. Թադէոս Թումանյան կ'աւանդէ երեսուներորդ, քսաներորդ, յիսներորդ, եօթանասներորդ. եւ ապա վաթսմերորդ, ութսմերորդ, իննսմերորդ (այս վերջինները՝ ը-ով. Գերակ. տարրական, Բ. տարի, Բ. տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1948, էջ 47) :

Զարեհ Մելքոնեան (Պէյրուի) 1956-7 տարիներուն Գերականութիւն մը հրատարակեց, երեք տարիներու բաժնուած. կը խօսի, բնական է, թուական ածականներու մասին, սակայն անգամ մը գոնէ կարողով չի շարեր. ընդհանուր սկզբունքներ տալով եւ քանի մը անմեղ օրինակներով կը փակէ հարցը:

Եզրակացութիւն. — Ամէն անգամ աւանջին իրաւունք տալու է. աւանջը կը լսէ, կը կրկնէ, իննիսուն, բայց գրիչը կը գրուի իննսուն (կամ իննըսուն). աւանջը կը լսէ ութսուն կամ ուցսուն, բայց կը գրենք ութսուն:

Ուրեմն երեսուներորդ-ի հարցին մէջ ոչ ճաշակի խնդիր կայ, ոչ ալ աշխատանքան երեւնալու աւելորդ նախաձեռններով իննսուն. արդի աշխարհաբարը միտքի, սիրտի, երկինքի գրելուն մէջ չի կայանար. զրաբարէն ձերբադատումը այս կամ այն հեղինակին քմահաճոյքէն չի կրնար կախուիլ, մանաւանդ երբ այդ քմահաճոյքը հակառակ է հիմնական օրէնքներու:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ

ՕՐ. ՇՈՒՇԱՆԻԿ ՄԻԼՏՈՆԵԱՆԻ

Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Առաջին իսկ ելույթով կը դառնայ միջազգային դէմք, քրմանոյշ տաւիղի, Վենետիկի պարծանք, պարծանք նաեւ հանուր հայութեան. եւ իր անունը կ'արձագանգէ Թեւ-Աւիւն մինչեւ Ամսթերտամ, ու մինչեւ Նիւ Եորք:

Սեպտեմբերի վերջին օրերն էին երբ խաղաղական ճայնափիւռը ողբերգութեամբ կը հաղորդէր Օր. Շուշանիկի յաղթանակը: Թեւ-Աւիւն մէջ կազմակերպուած էր տաւիղի միջազգային մրցում. տասներկու արդեր ներկայացած էին իրենց 52 ախոյեաններով, որոնց մէջէն բացարձակ առաջնութիւնը կը շահէր Օր. Շուշանիկ Միլտոնեան, ներկայացնելով Իտալիան:

Ու հիմա շնորհալի օրիորդը, տաւիղի ձեռքին կը շրջի երկրէ երկիր, իրրեւ Նոր Որիէոս հայազարմ, նուագներով դիւթելու համայն աշխարհ, Եւրոպա եւ Ամերիկա: Մօտերս Վենետիկի «Fenice» թատրոնին մէջ եւս պիտի նուագէ: Ապա Միլան, Թորինոյ, Հռոմ, Վիեննա:

Օր. Շուշանիկ Միլտոնեան ծագումով Արտանուշի է. զաւակ Մուրատ-Ռաֆաֆայէլեան վարժարանի նախկին սան՝ Պր. Արտաւաղ Միլտոնեանի. երաժշտութիւնը այս ընտանիքին մեծագոյն հարստութիւնն է. երէց քոյրերը երկուքն ալ Վենետիկի «Պենետեքսոյ Մարչելլոյ» երաժշտանոցէն պսակուած՝ դաշնամուրի եւ թաւջութակի մասնագիտութեամբ. Շուշանիկ այս տարի Յունիսին աւարտեց իր երաժշտական ուսումները, խելով ամենաբարձր նիշերը. տարիներէ ի վեր կը լսէինք որ երաժշտանոցին ամենաքաջ աշակերտուհին է իրը նուագածու տաւիղի. եւ ահա բոլորին ակնկալութիւնները կու գան յանկարծ պսակուիլ Թեւ-Աւիւն այս յաղթանակով:

Համեստ ու պարզունակ, Օր. Շուշանիկ առաջին իսկ վայրկեանին պիտի մոզել ունենդիրները իր բացառիկ երաժշտակա-



նութեամբ եւ խորաթափանց ապրումներով՝ որոնք իր մատներէն կը հաղորդուին թելերուն. ու լարերն յանկարծ կեանք կ'առնեն, կ'արձագանգեն, ալիքներու նման կ'եթերանան. կը յուզեն, կը մոզեն, կը խլեն ծափեր. մինչ նա կը ժպտի համեստօրէն, եւ հայկական իր աչքերով կ'առնենք ներկաները:

Ի սրտէ կը մաղթենք որ այս յաղթանակը սկիզբն ըլլայ անթիւ դափնեպսակներու. եւ հայ անունը իր նուագին հետ թրթռայ հորիզոնէ հորիզոն:

Մեր մաղթանքն է որ Օր. Շուշանիկ տիրի ունենայ նաեւ նուագելու երեսանի թատրոնին մէջ, ուր պիտի ցնծան հազարամեայ մեր Գողթան երգիչներու երջանիկ ոգիները, եւ իրենց անյայտ շիրիմներէն ելլելով թափօր կազմած, արծաթեայ բամբիւններով պիտի գան ընդառաջ, Մասիս լանջին եւս չքնող պսակ մը դնելու Օր. Շուշանիկ Միլտոնեանի ճակտին:

ԽՄԲ.